ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

21.05.2026թ.
Ժամը 12[50]

Մասնակցում էին՝
գնահատողներ՝
ՊՆ ՌԲԱՎ նյութատեխնիկական պլանավորման և հսկողության բաժնի պետ, բ/ծ գնդապետ Գ. Պապոյանը,
ՊՆ ՌԲԱՎ նյութատեխնիկական պլանավորման և հսկողության բաժնի սպա, բ/ծ կապիտան Ա. Չիլինգարյանը:
Գնումները համակարգող
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Լ. Թազայանը:

Բացակայում էր հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝ ՀՀ ՊՆ 14203 զորամասի ֆունկցիոնալ ախտորոշման բաժանմունքի կաբինետի պետ, բ/ծ փ/գ-տ Գ. Հակոբյանը:

Ի գիտություն, քանի որ նիստին բացակայում էր գնահատող հանձնաժողովի նախագահ ՀՀ ՊՆ 14203 զորամասի ֆունկցիոնալ ախտորոշման բաժանմունքի կաբինետի պետ, բ/ծ փ/գ-տ Գ. Հակոբյանը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն ՊՆ ՌԲԱՎ նյութատեխնիկական պլանավորման և հսկողության բաժնի պետ, բ/ծ գնդապետ Գ. Պապոյանը:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի (ԲՄ) գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ բաց մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Բժշկական սարքավորումների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1. | «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ |
| 2. | «Օպտոտեք» ՍՊԸ |
| 3. | «Մեդէքսպերտ» ՍՊԸ |
| 4. | «Դիասերվ» ՍՊԸ |
| 5. | «Կվանտա» ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ բաց մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պահանջներին <u>համապատասխան կազմված լինելու մասին.</u>

(Լ. Թազայան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալի՝

Ի գիտություն՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը 3-րդ չափաբաժնի մասով չէր համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ սխալ էր նշված տվյալ չափաբաժնով նախատեսված

ապրանքատեսակի անվանումը, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի գ) պարբերության և 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ որոշեց մերժել վերջինիս հայտը 3-րդ չափաբաժնի մասով:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է բաց մրցույթի մասնակցի կողմից ներկայացված հայտը և պարզվել, որ դրանում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

«ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հավելված N1.1-ում «Տեխնիկական բնութագիրը» սյունակում 5-րդ չափաբաժին՝«Զարկերակային ճնշման մոնիտորինգի սարք», ապրանքատեսակի մասով նշված է.

«Կապի միացք՝ USB 3.0 (USB-C) կամ համարժեք»,

«Անվտանգության ստանդարտներ՝ AAMI/ANSI ES60601-1:2005/(R) 2012 +A1:2012 EN 60601-1:2006/A1:2013 / IEC 60601-1:2005/A1:2012 կամ համարժեք Վավերացումներ/Վալիդացիա/՝ ESH, BHS (A/A) և ANSI/AAMI/ISO 81060-2:2013 կամ համարժեք

Որակի վկայականների առկայություն՝

FDA կամ CE կամ համարժեք

ISO 13485 կամ համարժեք», ուստի առաջարկվել է հստակեցնել առաջակվող ապրանքի ամբողջական նկարագիրը, բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, բացի այդ հայտ ներկայացրած 3-րդ և 5-րդ չափաբաժիններով ապրանքատեսակների մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1)-ում «Մոդելը» և «Արտադրողի անվանումը» սյունակներում նշված ապրանքի անվանման փոխարեն անհրաժեշտ է նշել ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքատեսակների մոդելի և արտադրողի անվանման մասին տեղեկատվությունները:

«ԿՎԱՆՏԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հավելված N1.1-ում «Տեխնիկական բնութագիրը» սյունակում 5-րդ չափաբաժին՝ «Զարկերակային ճնշման մոնիտորինգի սարք», ապրանքատեսակի մասով նշված է.

«Կապի միացք՝ USB 3.0 (USB-C) կամ համարժեք»,

«Անվտանգության ստանդարտներ՝ AAMI/ANSI ES60601-1:2005/(R) 2012 +A1:2012 EN 60601-1:2006/A1:2013 / IEC 60601-1:2005/A1:2012 կամ համարժեք Վավերացումներ/Վալիդացիա/՝ ESH, BHS (A/A) և ANSI/AAMI/ISO 81060-2:2013 կամ համարժեք

Որակի վկայականների առկայություն՝

FDA կամ CE կամ համարժեք

ISO 13485 կամ համարժեք», ուստի առաջարկվել է հստակեցնել առաջակվող ապրանքի ամբողջական նկարագիրը, բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը:

«ՄԵԴԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հավելված N 1.1-ում «Տեխնիկական բնութագիրը» սյունակում 4-րդ չափաբաժին՝ «Տրեդմիլ թեստի համար նախատեսված համակարգ՝ վազքուղիով», ապրանքատեսակի մասով նշված է.

«Որակի վկայականներ (առկայություն)

ISO13485 կամ համարժեք

CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA կամ համարժեք», իսկ 5-րդ չափաբաժին՝ «Զարկերակային ճնշման մոնիտորինգի սարք», ապրանքատեսակի մասով նշված է.

«Կապի միացք՝ USB 3.0 (USB-C) կամ համարժեք»,

«Անվտանգության ստանդարտներ՝ AAMI/ANSI ES60601-1:2005/(R) 2012 +A1:2012 EN 60601-1:2006/A1:2013 / IEC 60601-1:2005/A1:2012 կամ համարժեք Վավերացումներ/Վալիդացիա/՝ ESH, BHS (A/A) և ANSI/AAMI/ISO 81060-2:2013 կամ համարժեք

Որակի վկայականների առկայություն՝

FDA կամ CE կամ համարժեք

ISO 13485 կամ համարժեք», ուստի առաջարկվել է հստակեցնել առաջակվող ապրանքների ամբողջական նկարագրերը, բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, բացի այդ ապրանքատեսակների մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1)-ում «Մոդելը» և «Արտադրողի անվանումը» սյունակներում անհրաժեշտ է նշել ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքատեսակների մոդելի և արտադրողի անվանման մասին տեղեկատվությունները:

«ՕՊՏՈՏԵՔ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հավելված N1.1-ում «Տեխնիկական բնութագիրը» սյունակում 5-րդ չափաբաժին՝ «Զարկերակային ճնշման մոնիտորինգի սարք», ապրանքատեսակի մասով նշված է.

«Կապի միացք՝ USB 3.0 (USB-C) կամ համարժեք»,

«Անվտանգության ստանդարտներ՝ AAMI/ANSI ES60601-1:2005/(R) 2012 +A1:2012 EN 60601-1:2006/A1:2013 / IEC 60601-1:2005/A1:2012 կամ համարժեք Վավերացումներ/Վալիդացիա/՝ ESH, BHS (A/A) և ANSI/AAMI/ISO 81060-2:2013 կամ համարժեք

Որակի վկայականների առկայություն՝

FDA կամ CE կամ համարժեք

ISO 13485 կամ համարժեք», ուստի առաջարկվել է հստակեցնել առաջակվող ապրանքի ամբողջական նկարագիրը, բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, բացի այդ հայտ ներկայացրած 3-րդ և 5-րդ չափաբաժիններով ապրանքատեսակների մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1)-ում «Մոդելը» և «Արտադրողի անվանումը» սյունակներում անհրաժեշտ է նշել ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքատեսակների մոդելի և արտադրողի անվանման մասին տեղեկատվությունները:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 21.05.2026թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.5 25.05.2026թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում վերոնշյալ մասնակիցների կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները և նիստը շարունակվեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Գնան առարկայի անվանումը | Չ/մ | Քանակ | Գնման գին ՀՀ դրամ | բաց մրցույթին մասնակցող ընկերությունների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հ/Հ | Անվանումները | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
| | | | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Էխո սրտագրման սարքավորում | հատ | 2 | | | | | | |
| 2 | Շարժական էխո սրտագրության սարք | հատ | 1 | | | | | | |
| 3 | Հոլտեր մոնիտորինգի սարք | հատ | 8 | | 1 | «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ | 13 700 000,00 | - | 13 700 000,00 |
| | | | | | 2 | «Օպտոտեք» ՍՊԸ | 21 600 000,00 | - | 21 600 000,00 |
| 4 | Տրեդմիլ թեստի համար նախատեսված համակարգ՝ վազքուղիով | հատ | 1 | | 1 | «Դիասերվ» ՍՊԸ | 21 000 000,00 | - | 21 000 000,00 |
| | | | | | 2 | «Մեդէքսպերտ» ՍՊԸ | 140 000 000,00 | - | 140 000 000,00 |
| 5 | Ձարկերակային ճնշման մոնիտորինգի սարք | հատ | 1 | | 1 | «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ | 220 000,00 | - | 220 000,00 |
| | | | | | 2 | «Կվանտա» ՍՊԸ | 1 200 000,00 | - | 1 200 000,00 |
| | | | | | 3 | «Օպտոտեք» ՍՊԸ | 1 950 000,00 | - | 1 950 000,00 |
| | | | | | 4 | «Մեդէքսպերտ» ՍՊԸ | 2 050 000,00 | - | 2 050 000,00 |

Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն:

«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը 3-րդ չափաբաժնի մասով չի ներառվել սույն աղյուսակում, քանի որ վերջինիս հայտը տվյալ չափաբաժնի մասով մերժվել է:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցները ԱԱՀ վճարող չեն:

3.4 Գների նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 25.05.2026թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ ճանաչել հետևյալ մասնակիցներին. տե՛ս Հավելված 1-ում:

Հավելված 1

| Հ/Հ | Գնան առարկայի անվանումը | Չ/մ | Քանակ | Գնման գին ՀՀ դրամ | բաց մրցույթին մասնակցող ընկերությունների | | | | | ընտրված մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հ/Հ | Անվանումները | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | | | |
| | | | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին | |
| 1 | Էխո սրտագրման սարքավորում | հատ | 2 | | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 2 | Շարժական էխո սրտագրության սարք | հատ | 1 | | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 3 | Հոլտեր մոնիտորինգի սարք | հատ | 8 | | 1 | «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ | 13 700 000,00 | - | 13 700 000,00 | «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Օպտոտեք» ՍՊԸ | 21 600 000,00 | - | 21 600 000,00 | |
| 4 | Տրեդմիլ թեստի համար նախատեսված համակարգ՝ վազքուղիով | հատ | 1 | | 1 | «Դիասերվ» ՍՊԸ | 21 000 000,00 | - | 21 000 000,00 | «Դիասերվ» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Մեդէքսպերտ» ՍՊԸ | 140 000 000,00 | - | 140 000 000,00 | |
| 5 | Ձարկերակային ճնշման մոնիտորինգի սարք | հատ | 1 | | 1 | «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ | 220 000,00 | - | 220 000,00 | «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ |
| | | | | | 2 | «Կվանտա» ՍՊԸ | 1 200 000,00 | - | 1 200 000,00 | |
| | | | | | 3 | «Օպտոտեք» ՍՊԸ | 1 950 000,00 | - | 1 950 000,00 | |
| | | | | | 4 | «Մեդէքսպերտ» ՍՊԸ | 2 050 000,00 | - | 2 050 000,00 | |

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել):

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Լ. Թազայան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-9/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող | Գ. Պապոյան |
| Գնահատող | Ա. Չիլինգարյան |
| Գնումները համակարգող | Լ. Թազայան |